ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1230-Ա « 04 » մարտի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի Հ.4639-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 10.02.2026 թվականի եզրակացությունը, ըստ օրենքի 05.06.2019 թվականի ժառանգության իրավունքի վկայագիրը և քաղաքացու դիմումը.

1.Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 18-ի «Ֆանարջյան փողոցի 1-ին նրբանցքի հ.9 բնակելի տան նյկատմամբ Աշոտ Պետիկի Ոսկանյանի, Արարատ Պետիկի Ոսկանյանի, Սմբատ Արմենակի Սմբատյանի իրավունքները վերականգնելու, 353.72քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.4639-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով, հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Ֆանարջյան փողոցի 1-ին նրբանցքի հ.9 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:».

2) Որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին, 2-րդ և 8-րդ կետերում՝ «Սմբատ Արմենակի Սմբատյան» բառերը փոխարինել «Մելանյա Սմբատի Սմբատյան» բառերով.

3) Որոշման նախաբանում «Սմբատ Արմենակի Սմբատյան (ծնված 10.05.1933թ.)» բառերը փոխարինել «Մելանյա Սմբատի Սմբատյանի (ծնված 21.12.1957թ.)» բառերով.

4) Որոշման 1-ին կետից հանել «57.76քմ մակերեսով հողամասն ընդհանուր համատեղ սեփականություն է Վարդան և Մկրտիչ Սմբատյանների հետ» բառերը:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ